ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

—

Պրինկիպո, 8 յուլիսի

Այս անգամ ձեզ կը գրեմ Կ. Պոլսի չրջականերից, այն կղզիներից, որոնք ասվում են Իշխանաց կղզիներ (Iles des princes) այն պատճառով, որ յունաց տիրապետութեան ժամանակ այդ կղզիները չատ իշխանազունների և բարձր հոգևորականների համար աքսորատեղի են ծառայել։ Այդ սիրուն կղզիները այժմ, ամառ ժամանակ Կ. Պոլսի բարձր հասարակութեան համար փոխարինում են նոյնը, ինչ Կօջօր, Բօրժօմ և Մանգլիս Թիֆլիսցոց համար։ Այդ ծովային, մօտ հարիւր վերստ ճանապարհորդութեամբ պարտական եմ մի զմիւռնիացի հայ ընտանիքի հրաւէրին, որի նահապետ պ. Բարոյեան-Էֆիզլեր այն անհատներից է, որոնց մեծ պակասութիւնը չափազանց հայամոլութիւնն է կազմում. այդ պատուարժան անձի ազգամոլութիւնը այնչափ հետաքրքրութեան է հասել, որ Կ. Պոլսի գրեթէ բոլոր հայ կաթոլիկները գիտեն, որ նա չատ լաւ իմանալով չորս-հինգ լեզուներ, ոչ մէկ հայ-կաթոլիկի հետ երբէք չէ խօսում ուրիշ լեզու, բացի հայերէնից. այս կը նշանակէ հայ-կաթոլիկի համար կամ բոլորովին հրաժարվիլ նորա ծանօթութիւնից կամ թէ զանազան կարևոր առևտրական գործերով կապված լինելու պատճառով, խօսել նորա հետ հայերէն, կրելով սրտի մէջ ամենածանր անձնական վիրաւորանք։

Հասունի տեղ, ինչպէս արդէն գրեցի, կաթուղիկոս ընտրվեց Աղարեան Ստեփաննոս եպիսկոպոսը, որը դառաւ հիմայ Պետրոս X-երորդ։ Այս դիրքը, որից Աղարեանի եղբայրները օգուտ քաղելով մի քանի տարից յետ կը լինեն Թիւրքիայի առաջնակարգ հարուստներից, Թիւրքիայից գնվեց մօտ հարիւր հազար ռուբլ կաշառով և բերել տալով Հայաստանից մի քանի հազար կաշառված կամ թէ կեղծ ընտրողական ստորագրութիւններ։ Մեր կղզի գնացած օրը, ուր ընկերակցում էին մի հայ և մի անգլիացի բարեկամներ, Աղարեանը մեծ հանդէսով ստանում էր իր ընտրութիւնը։ Այցելուների և հանդիսականների խուռն բազմութեան մէջ չէր կարելի ներկայ չը գտնվիլ և մեզ տօնակատար կրօնաւորը ոսկիներով էր զարդարված և կոկված։ Ձեռքերը և կուրծքը բարձած էին գոհարեղէններով և թանկագին քարերով. վրան ունէր ամենաբաց գոյնով կարմիր վերարկու և երեսը ծայրերից սափրած ու մկրատած էր։ Խուռն բազմութիւն հայ-կաթոլիկ կանանց և աղջկերանց դաս դաս դալիս էին և հիացմունքից թռչկոտելով համբուրում էին նրա ձեռքը, կօմպլիմենտներ ստանալով ի հարկէ միայն թիւրքերէն լեզուով։ Երկու բարեկամներից, անգլիացի պ. Ֆ. գիտումէր այս տեսարանը և չը կարողանալով զսպել իրան, բացականչեց վերջապէս. «յոյների մէջ պակասութիւններ չատ եմ նշմարել, բայց տեսնելով այսպիսի հայերին, հիմայ հարիւր անգամ կասեմ «կեցցէն յոյներ», որոնցից յոյն կաթոլիկները ոչ պակաս ազգասէր յոյներ են քան թէ ուղղափառ յոյները. նոյնն են և բողոքական և նաև մահմետական յոյները Կրետի և Սալոնիկի մէջ»։ Էլ կարող էք երևակայել թէ ինչպէս պիտի տրորվէր այս խօսքերից նոցա լսող հայու սիրտը։ Յոյնի համար գլխաւորը ազգութիւնը և մայրենի լեզուն է, իսկ հայի համար գլխաւորը կրօնն է, իսկ ազգութիւնը և մայրենի լեզուն ոչինչ նշանակութիւն չունեն նրա համար։

Բայց ինչ ճառ կայ վերջապէս այսպիսի ազաւեր ուղղութեան առաջն առնելու համար, որով մեր ազգի պէս մի փոքրիկ և մեծ պետութիւնների հետ ոչինչ կրօնական և արիւնակցական առընչութիւն չունեցող ժողովուրդ, բաժան բաժան եղած չը քայքայվի և կորչի զանազան կրօնական աղանդների մէջ։ Այս կարևոր խնդրին մի բաւարար պատասխան տալու համար, դարձեալ կը գանք «Մշակի» տեսակէտին, այն է, օտար ցեղերին և կրօնաբաժան հայերին միմեանց հետ կամաց կամաց մօտեցնելու և կապելու համար, հարկաւոր է այժ տալ Հայաստանի մէջ մշակութեան և արհեստից ծաւալման, որի մէջ չունենալով ոչ կրօնական շարժառիթներ և ոչ արգելքներ, մատաղ սերունդը կարողանայ կապվել հացի և նիւթական պահանջների համերաշխութեամբ, որով նա կը դնէ և հաշտութեան և միութեան հիմքը։ Մինչ մեր Կովկասի հայ ուսումնարանների և Հայաստանի ուսումնարանների մէջ մինչև հիմայ բռնած վերացական ուղղութիւնը քիչ համոզեց մեզ թէ վերացական ճանապարհով ոչինչ միութիւն գլուխ գալու բան չէ։ Այս չէ՞ մինթէ «Մշակի» համոզմունքը. եթէ այս է, ինչու՞ ուրեմն Միացեալ ընկերութիւնը յամառվում է, շարունակելով 27,000 ուսում առնող երեխաներ ցոյց տալ մեզ Հայաստանի մէջ. մինթէ այս մասին էլ խօսենք մենք սոցա հետ երես առ երես իրանց սեփական լրագիրների մէջ, ցոյց տալով իրանց ակներև սխալը.... Լա՛ւ, ղիցուք թէ փոխանակ իրանց յայտնած քսան ու եօթը հազարի, Հայաստանի մէջ կայ երկու հարիւր եօթանասուն հազար ոտանաւոր սովորող մանուկներ, բայց ինչ օգուտ արդեօք այդ ամենից Հայաստանի վերոյիշեալ ցաւին և իրական չահերին։ Խօսելու ժամանակ սոքա ասում են թէ մեզ հետ և մեր կարծեաց բոլորովին համամիտ են, բայց գործը իրականի գալով, տեսնում ենք, որ սոքա աչկարաց կերպով հակառակն են անում, որովհետև ամենևին չեն ուզում յետ կանգնել իրանց բռնած «լոյսի», «մոքի» ու «հոգու» ուղղութիւնից։ Մինթէ վերջապէս մենք, ռուսահայերս, Հայաստանի այսչափ կենսական չահերի վերաբերմամբ, գիտակցաբար պիտի ծառայենք և գործիք լինենք Կ. Պոլսի տիրացու-քաղաքագէտների երևակայական և խաբուսիկ ձեռնարկութիւններին. չը կարծեմ. վասնորոյ պարտաւորութիւն եմ համարում յիշեցնել ձեզ, որ ձեր հինգ առաջնորդող յօդուածներով յայտնած առաջարկութիւնների մասին մինչև որ Միացեալ ընկերութիւնը ձեզ պաշտօնական հաշիւ չը տայ, այստեղի հասարակութիւնը չէ կարող ըստ արժանոյն գնահատել այդ առաջարկութիւնների այժը, որ արել է հէնց այն խմբագրութիւնը, որը ինքն է եղել սոցա հաստատութեան և միացման գլխաւոր պատճառը։

Կղզիի վրա հիւրասիրվելով ինձ յաջողվեց ծանօթանալ չատ յոյն գրագէտների հետ, որոնց մէջ առանձին համակրութեամբ և բաւականութեամբ լսեցի հռչակաւոր յոյն լրագիր «Նեօլոգոսի» խմբագրի կարծիքները։ Խօսելով ազատ Յունաստանի մասին, յարգելի գրագէտը խստիւ գանգատվում էր այն կապկութեան վրա, որով յոյները աշխատում են ամեն քայլափոխում բազմացնել իրանց ուսումնարանների և բարձրագոյն ճեմարանների թիւը առանց սակայն երկրագործութեան և արուեստավարժութեան վրա հոգալու. այս է պատճառը, ասում էր նա, որ Յունաստանը ունենալով Ֆրանսիայից և Անգլիայից տասնապատիկ աւելի գրագիտութիւն և ուսում, օրէցօր մինչդեռ այնչափ նիւթաւորապէս ընկնելու վրա է, որ չը գիտենք թէ վերջը ուր պիտի երթայ։ Իսկ երբ ես և իմ հայ ընկերակիցս յայտնեցինք թէ մինչև թիւրքաց Հայաստանի մէջ որ և է բարենորոգում և քաղաքական կազմակերպութիւն մտցնելը, հայ մամուլը սկսել է արդէն հետամուտ լինել հայրենեաց մէջ բընակելի երկրագործական և արուեստավարժական ուղղութեան, մեր յոյն բարեկամը բոլոր եռանդով մեկնեց իր ձեռքը շնորհաւորելու համար։ «Յոյները և հայերը, ասաց նա, երկու միակ ազգերն են, որոնց քաղաքական չահերը աւելի մօտ և աւելի սերտութեամբ են կապված, քան թէ որ և է ուրիշ ազգերի, վասնորոյ մենք պարտաւոր ենք միմեանց հաղորդել մեր պակասութիւնները, որ մէկը մեզանից չընկնէ այն սխալմունքների մէջ, որից տարիներով վնաս է տեսել միւսը։ Ուրեմն շնորհաւորում եմ ձեզ, կրկնեց նա, առանձին խնդակցութեամբ, որ դուք ձեր գործի դեռ սկզբում արթնացել էք և գտել ուղիղ ճանապարհը։» Ինչու՞ են յամառվում բայց այս տեղի «եռանդոտ» ասված երիտասարդները «Մշակի» խորհուրդներին չը հետևելու մէջ. չեմ կարող ամենևին հասկանալ։

Ինչպէս Պրինկիպո կղզու լուր կարող եմ հաղորդել Թիֆլիսի հայ հասարակութեան, որ նա բաւականութիւն կունենայ տեսնել շուտով իր մէջ հիւր այս տեղի մեծանուն գերդաստանից մի տիկին, որի մէջ իդէալական հայուհու ամենաբարձր բարոյական, մտաւոր և պլաստիկ գծերը այնչափ են ամփոփված, որ Թիֆլիսի օտարամոլ տիկինները կարող են իրանց աչքերով համոզվել թէ ինչ ասել է զուտ և անխառն հայուհին։ Թիֆլիսի այս թանկագին հիւրը, որը կը գայ այցելել ձեր քաղաքում իր երկու ազգակցուհիներին, ընիկ զմիւռնիացի է, որով կարող էք գաղափար կազմել Զմիւռնիայի հայկական տիպի և բարքաոի վրա։

Վաղը մտադիր եմ վերադառնալ Կ. Պոլիս, ուր երևի դիզվել են բաւական հետաքրքիր լուրեր ձեզ միւս անգամ հաղորդելու համար։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հեռագրում են լրագիրներին որ Միդհաթ-փաշային մահվան դատապարտելը չատ մեծ յուզմունք է պատճառել Կ. Պոլսի մէջ։ Աբդուլ-Համիդ սուլթանի հակառակ կուսակցութիւնը այն աստիճան յուզված է որ կարելի է վախենալ մի պալատական յեղափոխութիւնից։

—Վիէննայի «Presse» լրագրին հեռագրում են որ չատերը Կ. Պոլսի հայ-կաթոլիկներից դժգոհ են Ազարեանի նշանակելուց հայ-կաթոլիկ կաթողիկոսի պաշտօնի վրա։ Երկիւղ են կրում որ դարձեալ հերձուած կարող է տեղի ունենալ։ Լուր կայ որ Բ. Դուռը վախենալով մի նոր հերձուածից, դիտաւորութիւն ունի անվաւեր համարել Ազարեանի նշանակութիւնը։

—Գերմանիայի մի քանի տեղերում շարունակվում են հակահրէական շարժումներ։

—Լօնդօնից հեռագրում են որ անգլիական մինիստրութեան մէջ կընդունվի նախկին անգլիական դեսպան Կ. Պոլսի մէջ, պ. Գօշէն։

—Գրէնվիլ պահանջել է Ֆրանսիայից որ Տըրիպոլիս պատերազմական գործողութիւններից ազատ մնայ։

—Ֆրանսիայի մի քանի քաղաքներում, Լիոնում և Գրենօբլում զգալի եղան յուլիսի 9-ին երկրաշարժի հարուածներ։

—Լօնդոնի «Times» լրագրին Տունիսից հեռագրում են, յուլիսի 18-ից հետևալը. «Արաբական ձիաւոր աւազակների մի խումբ, որ բազմաթիւ ուղտեր էր յափշտակել Տունիսի չրջականներից, յարձակվեց մէկ կալուածքի վրա, որ մայրաքաղաքից տաս մղոն հեռու է գտնվում։ Ասում են, որ այդ խմբին մի ուրիշ խումբ էլ կաւելանայ։ Տեղացիների մէջ մեծ յուզմունք է տիրում։ Այստեղ կարծում են, որ մեծ անկարգութիւններ կը պատահեն։ Բէյը զօրքեր ուղարկեց Տունիսի ներքին գաւառները, բայց հաւատացած չէ, որ իր զինուորները կը կռւեն ապստամբների հետ։

—Լրագիրներին հաղորդում են Փարիզից յուլիսի 20-ից հետևեալը։ «Սֆակս վերցնելու լուրը ստանալով, Տունիսի բէյը հեռագրով շնորհաւորեց Բուստանին այդ յաղթութիւնը և նրան իր ուրախութիւնը յայտնեց կարգը վերականգնելու համար։»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի փաստ մեր ուսումնարանական կեանքից։

Մի փոքրիկ օրիորդին հարցնում են թէ ինչպէս է հայերէն գ ա զ է տ։

—Մշակ, պատասխանում է մանուկը։

* * *

Թիֆլիսի հայոց ուսումնարաններից մինում հարցաքննութեան ժամանակ մեր երիտասարդ քահանաներից մինը ուզենալով հասկանալի կերպով բացատրել մանուկներին թէ ինչ է եկեղեցին, հարցնում է մի ութ տարեկան աշակերտուհուն։

Ես և դու ինչ ենք։

—Եղբայր և քոյր, պատասխանում է աղջիկը։

—Ոչ, որդեակ, եկեղեցի ենք, բացատրում է ուսեալ քահանան։

* * *

Մեզ գրում են Ղարաքլիսայից։ «Թեմական տեսչի օգնական պ. Գռօշեանց եկաւ Ղարաքլիսա, ուսուցչական և հոգաբարձական ժողովներ կազմեց, դպրոցի մի քանի պակասութեան վրա խօսելով, կարդաց դպրոցի հաշիւները ի լուր ամենքի։ Նա պարտաւորեցրեց հոգաբարձութեան որ մինչև օգոստոսի վերջը դպրոցի բոլոր պակասութիւնները հոգան։ Դպրոցի պարիսպը արդէն վերջացրել են, բակի մէջ բացված դուքանների դռներից մի երկուսը քարով չարել են, արտաքնոցը համարեա վերջանալու մօտ է։ Մընում է մի դուռ քաշ անել և ամեն տեսակ օտար երթևեկութիւն կտրել և դպրոցը ազատել այսքան երկար խօսակցութեան առարկայ լինելուց։»

* * *

«Պսակ» լրագրում կարդում ենք։ «Ասում են որ Վ.Հ. կաթողիկոսը յայտնել է ցանկութիւն կտակել յանուն իր կառուցած Գէորգեան ճեմարանի 1,500,000 ռուբլ իր սեփականութիւնից։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յուլիսի։ Նորին կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայևիչ իր խնդիրքի համեմատ արձակված է հետևեալ պաշտօններից՝— Պետական խորհրդի նախագահութենից, գինուորական ծառայութեան մասին առաջին հիմնարկութեան նախագահութենից, գիւղական կազմակերպութիւնը կարգադրող գլխաւոր մասնաժողովի նախագահութենից, նաւատորմի և ծովային բաժինը կառավարելուց, մնալով Գենեռալ-Ադմիրալ, Գենեռալ-Ադիւտանտ և այլ պաշտօնների և կոչումների մէջ։ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ նշանակված է նաւատորմի և ծովային բաժնի գլխաւոր հրամանատար Գենեռալ-Ադմիրալին տուած իրաւունքներով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յուլիսի։ Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչին հրամայած է վարել Պետական խորհրդի նախագահի պաշտօնը, պահելով բոլոր միւս պաշտօնները և կոչումները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 62 կ., երկրորդ 94 ռ. 50 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 25 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 223 ռ. 25 կ., երկրորդ 222 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ., երկրորդ 92 ռ. 12 կ., երրորդ 92 ռ. 12 կ., ոսկի 7 ռ. 80 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25,21 պէնս, ռուսաց 100 ռ. Գերմանիայի վրա արժէ 216 մարկ, Փարիզի վրա արժէ 266 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յուլիսի։ Պաշտօնապէս հաղորդում են, որ երէկ $3^3/_4$ ժամին կէսօրից յետոյ Թագաւոր կայսրը, Թագուհի կայսրուհին, Մեծ Իշխան Թագաժառանգը և Մեծ Իշխաններ Գէորգի և Ալէքսէյ Ալէքսանդրովիչ ճանապարհ ընկան Պետերբուրգից Մոսկվա ուղեկցութեամբ մինիստր կոմս Իգնատիէվի, կոմս Վօրոնցով-Դաշկովի և Բարձրագոյն Սվիտայի։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Դր. Խ. Ձեր անունով էլ ստացվեցաւ խմբագրութեան մէջ մի օրինակ Էմինի նոր աշխատութեան։

—ԲՕՐԺՕՄ. Օր. Մ. Շատ չնորհակալ ենք ձեր ուղարկած նամակի համար։

—ԵՐԵՒԱՆ. Նորայր. Տպեցինք ձեր թղթակցութիւնը, բայց պատասխանատուութիւնը ձեզ վրա ենք թողնում։

—ՇԱՄԱԽԻ. Բ. Մենք չենք ընդունում յանձնարարութիւններ գրքեր առնելու և նրանց այլ և այլ քաղաքներ ուղարկելու։ Միայն այն գրքերի փոխն ենք ընդունում, որոնց մասին յայտնում ենք մեր լրագրում թէ ծախվում են «Մշակի» խմբագրատան մէջ։ Բայց եթէ տպում ենք «Մշակի» մէջ յայտարարութիւն թէ այս ինչ գրքեր ծախվում են «Կենտրոնական» կամ «Կովկասեան» գրավաճառանոցներում, այդ չէ նշանակում թէ փողը պէտք է մեզ ուղարկվի։ Փողը պէտք է ուղարկել այն գրավաճառանոցին, որ ծախում է գրքերը և նրանից պահանջներ ունենալ։ Եթէ, օրինակ, յայտարարութիւն ենք տպում թէ այս ինչ տեղ ծախվում է մ ա զ ե ր ս և ա ց ն ո ղ դ ե ղ, մինթէ մեզ պէտք է փող ուղարկէք այդ դեղը ստանալու համար և մեզանից կը պահանջէք որ մենք ձեզ դեղը ուղարկենք։ Մեր լրագրում տպված յայտարարութիւնների համար ղ ա կ ա զ ն ե ր մենք չենք կարող յանձն առնել։ Մինթէ ամեն բան պէտք է բացատրել հայերին։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ